ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«11» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

Ֆոտոն ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 Ֆոտոն ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ «4.3. Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնի «4.3.3. Վարչատարածքային միավորը», ինչպես նաև «4.4. Անձի բնակության հասցեն» ենթաբաժնի «4.4.3. Վարչատարածքային միավորը» դաշտերը լրացված չեն: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7)-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի

«4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ» դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում Հայտարարագրի 4.7.3.-րդ դաշտում կատարված նշումն ավելորդ է, ինչպես նաև Հայտարարագրի հավելվածի համարը նշված է «1.3», այն դեպքում, երբ հրավերով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանված է N 1.2 հավելվածով:

- 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 Ա/Ձ Կարեն Գևորգյան

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության երրորդ նախադասության մեջ լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը).

- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. հուլիսի 13-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել Ֆոտոն ՍՊԸ-ին, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հուլիսի 12-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նելա Մուրադյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան